ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2018 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 4 նիստի

Օրակարգում՝ դեկանի տարեկան հաշվետվություն:

Նիստը նախագահելու համար առաջադրվեց պրոֆ. Դ. Վ. Պետրոսյանի թեկնածությունը:
Առաջարկությունն ընդունվեց միաձայն:
Նիստին գիտխորհրդի 20 անդամից ներկա էր 16-ը, ինչպես նաև ԵՊՀ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանը:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:
(Հաշվետվությունը կցվում է):

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Մ. Մ. Հովսեփյան, Հ. Ն. Զորյան, Ն. Է. Վարդանյան, Ա. Տ. Պողոսյան, ՀՕՖ-ի կրթական ծրագրերի համակարգող Է. Կարապետյան, Ինֆորմատիզացիայի միջազգային ակադեմիայի հիմնադիր նախագահ Ազատ Վարդանյան:*

Ելույթ ունեցողները արժևորեցին դեկանի աշխատանքը, փաստեցին, որ հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում ուսումնագիտական կյանքն ընթացել է բնականոն հունով, ապահովվել է ուսանողակենտրոն կրթական միջավայր, կյանքի են կոչվել ԵՊՀ-ի և ֆակուլտետի ռազմավարական ծրագրերով նախատեսված ախատանքները՝ ի նպաստ կրթության որակի ապահովման և բարելավման:

Ելույթ ունեցավ նաև ԵՊՀ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանը: Պրոռեկտորը դրական գնահատեց դեկանի և ֆակուլտետի կատարած աշխատանքը, պատասխանեց հնչած հարցերին և հարցադրումներին:

Նիստը նախագահող Դ. Վ. Պետրոսյանն առաջարկեց գնահատել դեկանի աշխատանքը:

Բաց քվեարկությամբ գիտխորհուրդը բավարար գնահատեց դեկանի աշխատանքը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան, բան. գիտ. թեկնածու, դոցենտ Ն. Ն. Մարտիրոսյանի աշխատանքը գնահատել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Դ. Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. Ռ. ՄԵՆԵՄՇՅԱՆ

Երևանի պետական համալսարանի մեծարգո պրոռեկտոր,

Հարգարժան գործընկերներ,

Հարգելի հյուրեր,

Սիրելի ուսանողներ,

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում ուսումնագիտական կյանքն ընթացել է նախանշվածի համաձայն, և մեր ամենօրյա աշխատանքում, մեծ ու փոքր ձեռնարկներում մշտապես զգացել ենք համալսարանի ղեկավարության աջակցությունը, ինչի համար հայտնում ենք մեր երախտագիտությունը:

Այսօր, առավել քան երբևէ, համալսարանն այն վայրն է, որտեղ պետք է ծնվի որակյալ լրագրությունը: Որքան էլ մարդ գրելու շնորհք ունենա, չի կարող առանց համալսարանական մասնագիտական կրթության լրագրող դառնալ, ճիշտ այնպես, ինչպես, օրինակ, բժիշկ դառնալու ճանապարհը սկսվում է համալսարանական միջավայրից:

Պայմանավորված այն հանգամանքով, որ տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաները սրընթաց փոխվում են, լրագրությունը պահանջում է մասնագիտական որակյալ համալսարանական կրթություն: Մրցակցությանը դիմանալու, պահանջված լինելու և կենսունակ մնալու այլ ճանապարհ չկա:

Հակառակ պարագայում լրագրող դառնալու հավակնություն ունեցող մարդը կարող է աշխատաշուկայից դուրս մնալ: Համոզված ենք՝ պետք է ուսանողին ոչ միայն համակողմանի գիտելիքով ապահովել, գրել սովորեցնել, այլև իր գրածը շուկա հանել՝ լսարանից սահուն անցնելով խմբագրություն:

Հարգելի բարեկամներ,

ԵՊՀ զարգացման Ռազմավարական ծրագիրը սահմանում է համալսարանի առաքելությունը, տեսլականը, հիմնարար արժեքները, առանձնացնում է ռազմավարական նպատակները.

- Որակյալ կրթություն,
- Արդիական հետազոտություն և նորարարություն,
- Որակյալ մարդկային ռեսուրսներ,
- Ընդունելության բազմազանեցում և այլն:

Այդ, ինչպես նաև ժուռնալիստիայի ֆակուլտետի ռազմավարական ծրագրով նախատեսված առաջնահերթությունները մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են: Դրանցում ամրագրված դրույթները կյանքի կոչելիս կարևորում ենք ֆակուլտետի երկու

ամբիոնների յուրաքանչյուր պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի, դասախոսի, ասպիրանտի, ուսանողի դերը, նրանց մասնակցությունը ֆակուլտետի ուսումնագիտական կյանքին:

Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի (վարիչ՝ պրոֆեսոր Դավիթ Պետրոսյան) ուշադրության առանցքում են եղել ոլորտում արձանագրվող փոխակերպումները, հետաքրքիր և նոր իրողությունները: Խնդիրը լուծելու համար հրավիրվել են նաև դասախոսելու անհատներ, ովքեր տարիներ առաջ ավարտելով ֆակուլտետը՝ իրենց ընտրած ոլորտում առաջինն են կամ առաջիններից մեկը:

Հաշվետու ժամանակահատվածում լույս է տեսել (իհարկե, ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ, ամբիոնի ջանքերով կազմված) «Մեդիայի նշանագիտության ներածություն» գիրքը (խմբագիր՝ Հրաչ Բայադյան): Այն հայերենով առաջին խորքային հետազոտություններից մեկն է մեզանում: Հաշվետու ժամանակահատվածում մյուս կարևոր ձեռքբերումը «Ժուռնալիստիկա» պրակի (ժողովածուի) հերթական համարի հրատարակումն էր, արդեն «Ժուռնալիստիկա և հաղորդակցություն. տեսության և պատմության հարցեր» վերտառությամբ:

Պրակում զետեղված հոդվածներն ընտրվել և տպագրվել են՝ ելնելով լրագրագիտության արդի պահանջներից: Միևնույն ժամանակ ժողովածուն բավարարում է բոլոր այն պահանջները, որ առաջարկում է ԲՈԿ-ը: Այս տարվա օգոստոսին մենք այն ներկայացրել ենք ԲՈԿ՝ որակավորման ցանկում ընդգրկվելու առաջարկով:

Ժողովածուի խմբագրական խորհրդում ընդգրկված են ոչ միայն համալսարանի և հանրապետության լավագույն մասնագետները, այլև լրագրագետներ Սանկտ-Պետերբուրգի և Վիեննայի պետական համալսարաններից: Նախատեսում ենք հաջորդ համարում ներառել նաև արտասահմանյան հեղինակների հոդվածներ:

Ամբիոնի դասախոսներն զեկուցումներով և հոդվածներով շարունակում են հանդես գալ արտասահմանյան գիտաժողովներում և համաժողովներում /Դ. Պետրոսյան, Դ. Ալավերդյան, Վ. Պետրոսյան, Լ. Սայադյան և ուրիշներ/: Դավիթ Ալավերդյանը, Մարկ Գրիգորյանը, Սաթիկ Սեյրանյանը օրերս են վերադարձել Լոնդոնից, որտեղ հայկական պատվիրակության կազմում նոյեմբերի 26-ից 29 մասնակցում էին Մեդիա ուսումնասիրությունների միջազգային ֆորումին:

Ամբիոնում որոշակի աշխատանքներ են տարվում համագործակցության եզրեր գտնելու արտասահմանյան մի շարք բուհերի համապատասխան ամբիոնների հետ:

Շարունակվում են նամակագրական կապերը Վիեննայի պետհամալսարանի, Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարանի, Վարշավայի պետական համալսարանի

ժուռնալիստիկայի ֆակուլտետների և դեպարտամենտների հետ: Այս կապերի շրջանակներում աշխատանքներ են տարվում նրանց հետ մեկտեղ ներգրավվելու մեդիայի ոլորտում Էրազմուս պլյուսի առաջարկած ծրագրերում, ինչն, իհարկե, տնական ու հետևողական աշխատանք է պահանջում:

Ամբիոնն արձագանքել է նաև համալսարանի միջազգային բաժնի առաջարկին՝ անգլերենով դասընթացներ կարդալու օտարազգի ուսանողների համար: Մասնավորապես՝ Արման Ղարիբյանը մարտ-մայիս ամիսներին անգլերենով մի դասընթաց է վարել «Մարդու իրավունքներ և ժուռնալիստիկա» թեմայով՝ իտալացի ուսանողի համար:

Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի յուրահատկությամբ պայմանավորված (վարիչ՝ պրոֆեսոր Մուշեղ Հովսեփյան) մեծ ուշադրություն է հատկացվել և հատկացվում պրակտիկ, գործնական դասընթացներին, որոնք արդյունավետ կազմակերպելու համար հրավիրվել են ոլորտի հայտնի դեմքեր: Ամեն առիթով ասել եմ՝ նրանց ներկայությունը ֆակուլտետում թանկ ենք համարում՝Մարկ Գրիգորյանը, Քրիստինե Ալագուլյանը, Արտակ Հերիքյանը, Կարեն Գիլոյանը, Կառլեն Ասլանյանը, Զարուհի Բաթոյանը և այլք:

Ամբիոնը քննարկել և պաշտպանության է ներկայացրել Հարություն Ծատրյանի «Մեդիան և քաղաքական տեխնոլոգիաները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը, որը հաստատվել է ԲՈԿ-ի կողմից:

Ամբիոնն արձագանքել է համալսարանի միջազգային կապերի վարչության առաջարկին՝ պատրաստելու անգլերենով դասընթացներ օտարազգի ուսանողների և մագիստրոսների համար:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են արտասահմանյան ճանաչված մասնագետների / Սթիվ Քըրքչյան (ԱՄՆ), Վազրիկ Բազիլ (Գերմանիա) / մասնակցությամբ վարպետության-դասեր և հանդիպումներ:

Համագործակցության լավ հեռանկար է բացվում Սորբոնի համալսարանի հաղորդակցության և լրագրության բարձրագույն դպրոցի հետ: Նրանք փետրվարի 8-ից երկու շաբաթով հյուրընկալվեցին ԵՊՀ-ում (մանրամասնիր):

Ափսոսում եմ, որ մեկ տարի առաջ դեռևս չկային այս հնարավորությունները, որ իրականություն դարձան լրատվադաշտի մեր գործընկերների և ռեկտորատի համաձայնությամբ:

Արձանագրենք՝ անելիքները, այդուհանդերձ, շատ են: Հատկապես՝ գործնական պարապմունքների և պրակտիկ դասերի ծավալները մեծացնելու առումով:

Լրատվադաշտում բոլո՞րն են գոհ մեզանից: Իհարկե՝ ոչ: Իսկ լրատվադաշտի բոլո՞ր իրողություններն են գոհացուցիչ և ընդունելի մեզ համար:

Հարգելի գործընկերներ, համոզված եմ՝ լրագրությունն այսօր, առավել քան երբևէ, զարգացման մեծ հնարավորություններ ունի, բայց տեղեկատվության գերառատության այս դարաշրջանում մեր մասնագիտությունը լուրջ մարտահրավերների առաջ է կանգնած: Այս իրողություններով պայմանավորված՝ ուսումնական գործընթացը մշտապես նորովի կազմակերպելու, բակալավրիական ու մագիստրոսական ուսումնառությունը հստակ տարանջատելու ռազմավարությանը համահունչ, ձգտում ենք լրագրող պատրաստել վաղվա այն լրատվադաշտի համար, որն իր գործունեությունը ծավալում է պրոֆեսիոնալիզմի, էթիկական ու բարոյական նորմերի պահպանման ռազմավարությամբ:
Եթե տարիներ առաջ արդիական էր հարցադրումը՝ մագիստրատուրայում բակալավրիական որևէ առարկայի կրկնությունը մտահոգիչ է, ապա այսօր պետք է փաստենք՝ Ժուռնալիստիկայի ֆակուլտետում մագիստրատուրան չի կրկնում, չի կարող կրկնել բակալավրիատը թեկուզ մեկ առարկայի շրջանակներում: Այդուհանդերձ, դիմորդների թվի նվազում ունենք: Այդ հանգամանքն, անշուշտ, մտահոգիչ է և պայմանավորված չէ միայն կրթության որակի խնդիրներով: Վճարունակության խնդիրը ևս առկա է:

Առաջատար ՁԼՄ-ների լավագույն լրագրողները դարձյալ հրավիրվել են ֆակուլտետ՝ վարելու թիվ 1 մասնագիտական դասընթացը՝ Ժուռնալիստի վարպետությունը: Անշուշտ, այս գործընթացը հնարավոր չէր լինի իրականացնել, եթե չլիներ համալսարանի ղեկավարության համաձայնությունը: Գաղտնիք չէ, որ այս դասընթացը կազմակերպելիս մեծանում է ժամավճարով աշխատող դասախոսների թիվը, ինչն առանձնապես խրախուսելի չէ: Սակայն կարևոր և անհրաժեշտ է նաև հրավիրյալ դասախոսի ներկայությունը ֆակուլտետում: Հրավիրյալներից ամեն մեկը մի լրատվամիջոց է ներկայացնում, յուրատեսակ կամուրջ է դառնում բուհի, ֆալուլտետի և տվյալ լրատվամիջոցի միջև, բերում է իր փորձը, ոճը, ձեռագիրը: Հրաժարվել այս պրակտիկայից, սահմանափակել հրավիրյալների թիվը հնարավոր է, բայց կրթության որակը խիստ կտուժի: Պետք է աշխատենք լրատվադաշտի հետ՝ պրակտիկ աշխատանքի լայն դաշտ ապահովելով մեր ուսանողների համար:

Մեծարգո պրոռեկտոր, հարգելի գործընկերներ,

լրատվամիջոցների հետ փոխգործակցությանը կուզեի հավելել նաև միջազգային տարբեր կառույցների հետ սերտ գործակցությունը:

Պետք է առանձնացնեմ նաև համագործակցության մեկ այլ ոլորտ: Դպրոցների, հատկապես ավագ դպրոցների հետ կապը: Փաստել եմ. ինչպես նախորդ տարիներին, հաշվետու ժամանակահատվածում ևս Երևանի պետական համալսարանի մինչհամալսարանական կրթության վարչության հետ շարունակել ենք դիմորդների հետ տարվող աշխատանքը Երևանի և մարզերի դպրոցներում: Սեպտեմբերից վերսկսվել են ամենամսյա հանդիպումները ֆակուլտետի դիմորդների հետ:

Հարգելի գործընկերներ, գիտակցելով, թե ժուռնալիստիկան ինչ վճռական դեր ունի ժողովրդավարական պետություններում հանրային կյանքը կազմակերպելու գործում, ֆակուլտետը շեշտադրում է ինչպես քննադատական մտածողությունը, էթիկայի և օրենսդրության իմացությունը, այնպես էլ՝ հասարակության մեջ ժուռնալիստիկայի և զանգվածային հաղորդակցության ունեցած դերը: Այս համատեքստում պետք է արձանագրենք այն իրողությունը, որ 21-րդ դարում, մեդիաարդյունաբերության ընդլայնմանը զուգահեռ (հատկապես մեդիայի թվանշային դառնալուց հետո), «Ժուռնալիստիկան» և «զանգվածային հաղորդակցությունը» մարդկանց կողմից հաճախ օգտագործվում են մեկը մյուսի փոխարեն, բայց, ակնհայտ են տարբերությունները: Միաժամանակ՝ այս երկուսի միջև հստակ և կտրուկ սահմաններ չենք կարող դնել:Ակնհայտ է, որ ժուռնալիստիկան ավելի շատ հակված է մարդկանց տեղեկացնելու կարևորի և նշանակալիի մասին, մինչդեռ զանգվածային հաղորդակցությունն ավելի լայն ոլորտ է:

Այս իրողությունների իմաստավորմամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ ուսումնական պլաններն անընդհատ համալրվել են նոր առարկաներով (Մեդիաազդեցության ժամանակակից տեսություններ, Տեղեկատվական անվտանգություն և կոնվերգենտ մեդիա, Մեդիան և քաղաքական տեխնոլոգիաները, Մեդիահոգեբանություն, Գլոբալ տեղեկատվամիջոցներ, Մեդիայի և մշակութային ուսումնասիրություններ, Մեդիայի հետազոտության մեթոդներ, Հաղորդակցություն, մեդիա և մշակույթ և այլն): Առիթ ունեցել ենք ասելու. վերջին տարիներին ֆակուլտետի ուսումնագիտական կյանքում կատարված անհրաժեշտ փոփոխություններով և ընդլայնումներով պայմանավորված՝ փոխվեցին ամբիոնների անվանումները: Ուստի ավարտեմ խոսքս, ինչպես միշտ.Ֆակուլտետի անվանափոխության հարցը նույնպես օրակարգային ենք համարում:

Անշուշտ, տարիներ անց ֆակուլտետը կվերածվի ինստիտուտի ՝ Երևանի պետական համալսարանի **Ժուռնալիստիկայի և հաղորդակցության ինստիտուտ** անվանումով: Սակայն մինչ այդ ցանկալի է՝

Ժուռնալիստիկայի և զանգվածային հաղորդակցության ֆակուլտետ, Faculty of Journalism and Mass Communication, Факультет журналистики и массовой коммуникации

Շնորհակալություն